ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«05» հուլիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի ստեփանավանցիներ

Հուլիսի 5-ին Հայաստանը նշում է Սահմանադրության օրը:

1991 թվականին անկախության հռչակումից հետո Սահմանադրությունն ընդունվեց 1995-ի հուլիսի 5-ին և այդ օրն էլ դարձավ պետական տոն:

Երկրի Մայր օրենքը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Այս գիտակցությամբ պետք է գործենք ամեն օր՝ օրենքի գերակայությամբ կերտելով ժողովրդավար և ուժեղ պետություն: Նաև հստակ գիտակցելով, որ յուրաքանչյուր պետության լավագույն երաշխավորը օրինապաշտ և օրենքով պաշտպանված քաղաքացին է:

Օրենքի տառին համահունչ, սիրով ու նվիրումով, մեր ամենօրյա աշխատանքով նպաստենք մեր երկրի վաղվա օրվան:

Շնորհավոր Սահմանադրության օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ